



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material

3607

1253



1504




Հ. Տ.  
ՀՊԱ. Լ. Պ. ԱՅՐՎԱՆԵԱՆԻ

№ 1

Փոխադր, ոռութեակաց

Ա. Ի. Լեռնեզոյ

2003



ԹԻՖԼԻՍ  
Յագարան Մագիստր Պարդանեանց  
1904

5889

319

264

0.50

1

1

.

2

Հրատարակութիւն Հ. Մ. Վարդապետակի

Ք Գրայ ուստի Երանք թիւն  
աւելաց յակա քայ ըստ առաջարկ  
ԶԳՈՒՇԱՑԻՐ

891.71

9-46

2  
4969  
1009

# ԺԼԱՏՈՒԹԻՒՆԻՑ

ՓՈԽԱԴՐ. ՌՈՒՍԵՐԵՆԻՑ

Ա. Ի. ԼԵԹՆԵՑՈՅ

Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան Մովսէս Վարդանեանցի

1904

# ՅԱՀԱՅԱՅԻ

Դօս. Պենզորո. 22 Մարտ 1903 թ. Տիֆլիս.

ՊԵՆԶՈՐՈ

## ԶԳՈՒՇԱՑԻՐ ԺԼԱՏՈՒԹԻՒՆԻՑ

### I

Մայրաքաղաքի յետ ընկած փողոցներից  
մէկում, Յովհաննէս անունով մի ատաղձագործ,  
երկար տարիներ ապրում էր իւր ընտանիքի  
հետ։ Զանառէր ատաղձագործն իւր մուրճի բա-  
խումներով միշտ զրաւում էր անց ու դարձ ա-  
նողների ուշադրութիւնը։ Նա իւր մուրճի ան-  
դաղաք բախումներով ձանձրացրել էր բոլոր  
հարևաններին։ Մուրճի ձայնի հետ նա միաց-  
նում էր իւր ծանր ու դառն հոգսերի վշտա-  
լից մեղեղին։ Թըը՛խկ, թըը՛խկ, թըը՛խկ, բա-  
խում էր մուրճը փայտին։

Ամուր և աւելի ամուր էր զարկում ատաղձագործը մուրճով, կարծես նա մուրճի հարուածների ձայնով իւր վիշտն ու մերկ զաւակների լաց ու կոծը խափանել էր կամենում: Բայց մի բան, որ շատ էր զարմացնում բոլորին, այդ Յովհաննէսի ընտանիքում տիրող աղքատութիւնն էր: Զնայեած որ ջանասէր ատաղձագործն առաւօտուց մինչև կէս զիշեր անընդհատ գործում էր, այնուամենայնիւ նորա տանը թշուառութիւնն անպակաս էր:

Հնաղարեան տնակը թէքուել էր դէպի մի կողմ, զարդակ ու կեղտոտ բակում, դռան մօտ, պատնեշը վայր ընկել, տան պատերը խսպառ խոնաւացել, իսկ յատակը բոլորովին կորցրել էր իւր սկզբնական ամրութիւնը: Տան մէջ, աշքի էր ընկնում խախուտ պատին հենուած ոտքի մէկը կոտրուած սեղանը: Ամառ, ձմեռ նրա տանից անպակաս էր խոնաւութիւնը, կեղտը, թշուառութիւնն ու դառն կարիքը:

Հին փալասի կտօրներով ամրացրած լուսամուտի կեղտոտ ու կոտրուած ապակիները, կարծես երեխաների պէս լաց էին լինում և

խոնաւութիւնից առաջացած ջրագնդիկները իբրև արտասուք գլորում էին այդ կեղտոտ ապակիների վրայով: Բարակ կտուրից կաթում էր անձրեր, իսկ բամու առաջ տատանւում ամբողջ տունը: Յովհաննէսի երեխայքը սև հացի կտորին կարօտելով մօրը շրջապատուած լաց էին լինում: Լաց էին լինում խոնաւութիւնից հիւանդացած ու մերկ երեխայքը, սառը յատակի վրայ սողալով:

Աղքատութիւնից ու սովից նեղացած ատաղձագործ Յովհաննէսի կին Աննան, ամբողջ օրը գնում էր աշխատանքի և մի կերպ երեխանցը կերակրում: Թէկ դժուար էր նորա համար միաժամանակ և ուրիշի համար գործել և իւր մանը երեխանց խնամք տանել, բայց ինչ արած: Ամբողջ օրը առաւօտեան արշալոյսից աշխատելով՝ նա ջատում էր առողջութիւնը և ուշ զիշերին մի քանի կոպէկ հացի փող գրպանում, յոդնած և ուժասպառ տուն վերադառնում:

Իսկ Յովհաննէսը շարունակում էր մուրճով բախել տախտակներին ու ձգել իւր դառն ու

վշտալից մեղեղին։ Միւս կողմը երեխաները հեծուա, լաց էին լինում, նոյն իսկ կռւում չոր հացի կտորի համար։

Գիշեր էր. խեղճ Աննան երեխանց հետ փակուած սենեակում,

Վաղուայ ապրուստի համար էր նա մտածում.

Այսօրւայ օրն անշափ տխուր և մութ է շատ,

2կայ մի յոյս, վաղուան օրն աւելի է վատ։  
Կեանքի ծովում չի հասել նա նաւահանգիստ,

2ունէ նա և չէ ունեցել մի ըոպէ հանդիսատ։  
«Այսօր չեղաւ վաղը կը լինի» կը կնելով, նոյն թշուառը մնաց միշտ ապազան գովելով.

«Ի՞նչ անեմ, ում դիմեմ» երկար մտածում էր նա ու դառն արտասուքներն աշքերին, մօտենում ամուսնուն ու հարց տալիս լալագին։


«Հը, սիրելի Յովհաննէս, երեկուայ աշխատանքդ վերջացըիր, տիրոջը յանձնեցիր փող ստացալը»։

Լուրջ և անժպիտ էր ատաղձագործի մռայլ դէմքը. նա բարկացած պատապխանում էր։

— «Ճարայ, բայց ասացին, որ փողը միւս շաբաթ կստանաս» ու շաբունակում է գործել և երգել իւր անվերջ ու մելամաղձոտ երգը։ Կրտսում էր այդ երգը խեղճ կնոջ սիրտը նա ապշած նայում էր ամուսնուն։ Յովհաննէսն իւր խօսքերով կարծես երկսայրի սրով խոցոտում էր խեղճի սիրտը։ «Փող չկայ, ես ինչով հացառնեմ, իսկ խեղճ երեխայքս սոված են» մտածում էր Աննան։ Զեռքերը խաչած, անշարժ կանգնած նայում էր ամուսնու աշխատանքին իսկ Յովհաննէսն ոչ մի նշանակութիւն շտալով կնոջ թէ բռնած դիրքին և թէ նորա լացին, անդադար խփում էր մուրճով մէխին։ Թւում էր Աննային թէ իւր գլուխն էր մտնում այդ մեխը։ Խեղճն երկար սպասելով և Յովհաննէսից ոչ մի խօսք չսելով, արտասուալից աշքերով գնում, վերցին չոր հացի կտորն երեխայոց է բաժանում։ Զարմանում էր Աննան, որ իւր ամուսինը շաբունակ գործում էր, գործը իւր ժամանակին տիրոջն յանձնում, հարբել նա ամենսին շգիտէ,

բայց փող էլ չունի... երբեմն միայն մի քանի  
կոպէկ փող էր տալիս, իսկ թէ մնացած փողե-  
րը ինչ է անում, խեղճ կինը չէր համարձակ-  
ւում հարցնել իւր մարդուն, իսկ Յովհաննէսը  
չէր սիրում և մինչև անգամ սաստիկ բարկա-  
նում էր, երբ այդ մասին իրան բան էին հարց-  
նում: Երկիւղից լուսմ էր խեճջ կինը, ամբողջ  
օրն աշխատում ու մի կերպ երեխանցը պա-  
հում...

Ժամանակն անցնում, բայց նոցա դառն  
ու թշուառ կեանքն, անփոփոխ շարունակում  
էր:



## II

Ահա հասաւ և աշունն, եղանակը շատ  
ցուրտ է և խոնաւ, քամին փչում է ծխնելոյ-  
զից, անձրեց բախում լուսամուտը, իսկ անկող-  
նում, լալիս էր ցըտից ու խոնաւութիւնից սա-  
ռած հիւանդ երեխան: Խեղճ կինն որդու ան-  
կողնու մօտ նստած, նայում էր երեխայի ար-  
տասուքներին և խոցոտում էր նրա սիրտը,  
իսկ Յովհաննէսը կարծես ոչ քամու ահեղ ձայնն  
և ոչ էլ երեխանց դառն աղաղակը չէ լսում.  
Նա կարծես թէ խլացել է հանգիստ նստած  
զարկում է մուրճով և շարունակում իւր երկար  
ու անփերջ մեղեղին:

Հիւանդ մանուկը դառն արտասուքները  
նիհար գէմքին մեռաւ:

Նա մեռաւ—ցըտից ու սովից: Խեղճ Ան-  
նան երեխայի վերջին շնչի հետ ինքը ևս ուշագ-  
նաց եղաւ:

Յովհաննէսը լուսութեամբ իւր ձեռքով դա-

գաղիկ պատրաստեց, առանց շտապելու մեռած երեխային նախ եկեղեցի տարաւ ու ապա հանգստարան, խոնաւ գերեզմանը դրեց....: Անձրևի խոշոր կաթիլներն իբրև արտասուք թափւում էին մանուկի գերեզմանի վերայ, իսկ Յովհաննէսը դարձեալ մուրճով բախում ու երգում էր:

Դէմքը գունաթափ, զեղնուած ու միշտ լուռ է նա, Ոչ ոք չէ իմանում նորա հոգու գաղտնիքը: Այժմ առաջուանից շատ է աշխատում, օր ու գիշեր անդադար գործում, մի ինչ որ բան է շինում նա ծածուկ, մուրճն էլ աւելի զգոյշ է բախում, բախումներն էլ հաւասար չեն, կարծես վրդովուած ու յոզնած լինի ատաղձագործը:

Այլևս նրա մելամաղձոտ երգը չէ լսում, այժմ նա միշտ լուռ էր աշխատում: Նա բոլորովին նիհարեց գունաթափուեց, բայց շարունակում էր լուռ մնալ. նա խիստ տիսուր էր, կարծես մի ինչ որ դառն վիշտ նրա սիրտը մաշում էր: Երեխանց վերայ էլ չէ նայում, իւր կնոջը մի խօսք անդամ չէ ասում, առաւօտները շտապով տնից գուրս էր գալիս ու գնում իւր

գործարանը, ներսից ամուք կողպում և աշխատում առանց հանգիստ առնելու: Խեղճ կինը չէր իմանում թէ ինչ միջոցի գիմէ որ ամուսնուն մաշող վիշտն իմանայ ու բժշկէ նորան: Տանջւում էր նա ամուսնու փոխարէն: Սորան նորան հարցնում էր որպէս զի իմանար նորա հիւանդութիւնը, բայց ոչ ոք չէր իմանում Յովհաննէսի վիշտը: Խեղճը զիմում էր ամուսնուն, բայց այս վերջինս երբեմ այնպիսի հայացք էր ձգում իւր կնոջ վերայ, որ խեղճը չէր համարձակում այնուհետև այդ մասին խօսք անդամ ասել:

Ինչպէս եղաւ, մի կերպ աղքատութեամբ և տանջանքով անցկացըին ցուրտ աշոնը: Վրայ հասաւ ձմեռը. շրջակայրը ծածկուեց ձիւնով, իսկ նոքա վառելափայտ անդամ չունէին: Հարեանները մի առաւօտ պատահմամբ ատաղձագործի գործարանն են մտնում և ինչ են տեսնում. խեղճ Յովհաննէսը բոլորովին սառած դիակն ընկած էր գետնին: Ոչ հեռու զիակից, պատրաստ դրած էր մի մեծ ու ծանր դաղաղ: Դառն արտասուք էր թափում խեղճ կինն իւր

ամուսնու վերայ։ Հարևանները Յովհաննէսին դադաղն են զնում, բայց շարժել տեղից դադաղը, չեն կարողանում։ Զափազանց ծանը է լինում դադաղը։ Այդ բանը բոլորին գարմացնում է։ Բայց ինչ արած, մի կերպ բարձրացնում են ու տանում հողին են յանձնում։ Մեռնում է այսպէս ատաղձագործն ոչ ոքի մաս բարև չափով, առանց խօստովանուելու և առանց սուրբ հաղորդութեան։ Խեղճ Աննան չգիտէր ինչ անի, որ կարողանար երեխանցը կերակրել. Յովհաննէսը ոչ մի կոպէկ փող չէր թողել, իւր մահից յետոյ, ինչով պէտք է պահէր իւր մանը երեխանցը խեղճ այրին։ Աննան երկար մտածեց և վերջը դիմեց Յովհաննէսի պատուէր տուղներին՝ կարծելով թէ նոքա զեռ չեն վճարել Յովհաննէսին իրան աշխատանքի վարձը։ Բայց բոլորն էլ գարմացած յայտնեցին, որ լլիւ վճարել են Յովհաննէսին բոլոր իւր ստանալիքը։ Գունաթափ և դատարկածեոն վերադառնում է Աննան իւր ցուրտ ու խոնաւ տնակը։ «Արդեօք որտեղ է պահել իւր ստացած փողն իմ ամուսինս» մտածում էր նա օք ու գիշեր։ Երկար

մտածելուց յետոյ, մի օք, կանչում է հարևաններին ու դառն արտասուլներն աշքերին գանգատում իւր վիճակից։

Հարևաններն իսկոյն յիշում են դադաղի ծանրութիւնն և երկար մտածելուց յետոյ այն եղակացութեան են գալիս, որ Յովհաննէսն իրեւ մի ժլատ մարդ, անպատճառ իւր խնայած փողերն իւր հետ գերեզման է տարել։ Մի փոքր ժամանակ մի քանի բարի մարդիկ, կերակրում ու խնամք են տանում որբիկներին, մինչև որ նրա այրին զնում ամուսնու գերեզմանը փորելու իրաւոնք է խնդրում թէկ սկզբում արգելք եղան ու խեղճ կնոջը շատ չարչարեցին, բայց վերջը իրաւոնք տուին փորելու։

## III

**ծաղեց ձմեռուայ պայծառ առաւօտը:** Կապոյտ երկնակամարի վերայ փայլում է արեգակը, իսկ ոտքի տակին ճշոճըում ձիւնը: Ամբոխը հաւաքուած է գերեզմանատուն: Ամենքը սարսափած նայում էին՝ թէ ինչպէս քանդում են ատաղձագործի գեռ թարմ գերեզմանը: Զիւնը գերեզմանի վերայից ցրուցին, բաց արին գերեզմանն ու հանեցին դագաղից մեռեալի ոսկոները: Ամբոխը խաչակնքում և լուռ աղօթում էր: Բոլորը սարսափի մէջ զննելով զագաղը—զտան, որ կրկնակի յատակ ունի...: Իսկ երբ յատակը բաց արին, ամբոխը ընդհանուր ճիշ բարձրացրեց, տեսնելով, որ ժլատը դագաղի մէջ էր թաղցրել իւր ահազին հարստութիւնը: Յատակի վերայ թափուած էր դեղին և սպիտակ փողի կոյտերը: Ձմեռուայ արեգակի տակ նորից փայլեցին այն ոսկին ու երծաթը,


ժլատը մտածել էր թագցնել իւր թշուառ ընտանիքից և իւր հետ գերեզման տանել... Այդ փողերի գտնելն իսկապէս մի փրկութիւն էր որբացած ընտանիքի համար: Խեղճ կինը փողերը վերցրեց և շաղախեց նրանց իւր այբիկան արտասուբներով:

Այդ շարը, այդ անգնեթը և ժլատը չէր խղճացել իւր թշուառ ընտանիքին, նա իւր քարացած ու մեռած սրտի մէջ բոլոր լաւ զգացմունքները սպանել էր, միայն՝ ոսկուն և սատանային էր երկրպագել և մեռաւ այդ ժլատը ինչպէս հալածեալ՝ առանց խօստովանքի և առանց զղման:

Սարսափելի կերպիւ նա մեղանչեց Ամենաբարձրեալի առաջ:

Ողորմիր Տէր. Ներիր նորա հոգու ծանը մեղքը:

the country of deserts and steppes, which  
are covered with sand and rocks, and  
are inhabited by nomadic tribes, who  
are said to have descended from the  
ancient Hebrews. They are  
a fierce and warlike people, who  
are continually at war with each other,  
and with the neighboring tribes, and  
are always ready to attack any person  
or party that they may meet with.  
They are a poor and wretched people,  
and are destitute of almost every  
convenience of life.



3607

Գինն է Յ ԿՈՊԵԿ

2013

